

9876

655

12-61

2-46

Հ. Ս. Խ. Հ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՈՐԵԼՆԵՂԱԿԱՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

300
1470-24

150

ՂԵՎՈՆԴ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

(ՎԱՐՊԵՏ ՂԵՎՈՆԴ)

1888—1923

ԸՇԽԱՏԱՆՔԻ ՏՈՆԻ ԸՌԹԻՎ

Հ. Ս. Խ. Հ.

92
2-61

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՊԵՏԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Библиотечная Библиотека
7/31. 1922
ИМЕНА. МЯСНИКИНА
Ա. ՄԵՍՍԻՆԿԻԱՆԻ ԱՆՎԱՆ
1923

Լուսձողկումատի տպարան վաղաբազմատուն

2011

2-61

12114



1923

ՂԵՎՈՆԴ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

(ՎԱՐՊԵՏ ՂԵՎՈՆԴ)

1888—1923

Այս տարի լրացավ Լուսժողովմասի տպարանի (Վաղարշապատում) մեքենավար Վարպետ Ղևոնդի մեքենավարական, մեքենագիտական և տպարանական գործունեության 35-ամյակը:

Ո՞վ և վարպետ Ղևոնդը:

Նա ծնվել է 1871 թ. Թավրիզում, միջակ միջոցների, բայց Պարսկաստանում խոշոր շինարարական աշխատանքներ կատարող մի ընտանիքում:

Նրա հոր յեղերական մահից հետո, պարսիկ կառավարութունը իբրև պետական մի շարք շինարարական աշխատանքներ կատարողի վորդու, Վորդ ֆնացած մանուկ Ղևոնդին նշանակում է թոշակ մինչև նրա 25 տարեկան դառնալը, վորից էլ կարողանում Վարպետը լրիվ ոգտվել:

Ղևոնդը 1877-78 թ. թ. հաճախում է Թավրիզում Գրպետ և վարժուհի համարված Նանա-բաշու «դպրոցը», ապա մի տարի Հայկազյան դպրոցը, հետո Յեզրայրանի րականը, վոր հետագայում վերակոչվել էր Միացյալ Հայկազյան: Ղևոնդը ուսումնա ավարտել և Ղալայի Արամյան դպրոցում 1887 թվին:

Դեռ մանկութիւնէից Ղևոնդը մեծ ընդունակութիւններ եր ցուցց տալիս դանադան արհեստների մեջ:

Դպրոցական մանուկ հասակում Ղևոնդը մեծ սիրով դպրոցից դուրս գրադվում է արհեստներով, հաճախում է կարուձևի արհեստանոց, պարապ ժամերին տանը թոնիր և շինում, գնդասեղներ պատրաստում, հետագայում, արդեն պատանի՝ սովորում է նաև կազմարարութիւն, իսկ ավարտական տարիներին՝ գըրաշարութիւն:

Հենց դպրոցն ավարտելու տարին՝ 1887 թվին տեղի առաջնորդական տպարանում շարել և Ալ. Բեմի «Հոգեբանութիւն» հայերեն թարգմանութիւնը: Նույն տարին վարել և Լիւսիայի գրադարանում գրապահի պաշտոն:

Նույն 1887 թվի աշնանը Ղևոնդ Ղարախանյանը նշանակվում է Ղարաբաղի Ղասումաշեն գյուղի գըպրոցի ուսուցիչ, բայց յերկար չի տանում այդ դերը, փորովհետեւ չի վայելում հոգաբարձուների վստահութիւնը, քանի վոր «յերգել չիմացողը ուսուցիչ լինել չի կարող»:

Հետևյալ տարիներից Ղարախանյանի համար ստեղծվում է մի աստանդական կյանք, վորի ընթացքում հետզհետեւ մշակվում են նրա ընդունակութիւնները և կազմակերպվում ու խորանում նրա տպարանական և մեքենագիտական գիտելիքները:

Նույն տարին նա գնում է Շուշի, ուր մըտնում է մի դեղագործի մոտ ծառայութիւն, բայց հիվանդութիւն պատճառով հեռանում է գործից և մտնում Մահմետի—Հակոբյանի տպարանը, վորտեղ նույնպէս չի հաջողվում նրան յերկար մնալ, և ելի

նույն հիվանդութիւն (տենդի) պատճառով վերադադնում է Թավրիզ:

Անգործութիւնը չի մեղցնում Ղարախանյանի յեռանդը, և նա մեկնում է Պոլիս Ալաշկերտ—Ղարաքիլիսայի վրայով: Այդ ճամբորդութիւնը գլուխ բերելու համար Ղարախանյանը վերցնում է տնից՝ ուսական 25 բուրլու հափ դրամ և մի համարադրկ մեքենա, վորը երգըում է հարկադրված և լինում թողնել Սանասարյան վարժարանին՝ եջմիածնում կեղծ դրամ տպելու առթիվ երգըումում սկսած խուզարկութիւնների միջոցին չը վտանգվելու նկատառումով:

54 որից հասնում է Պոլիս, ուր Ղարախանյանը մոտիկից ծանոթանում է մեքենագիտութիւն և մասնավորապէս տպարանական գործին: Նա աշխատում է Գարեգին Բաղդադլյանի տպարանում գըրաշարութիւն և միաժամանակ մեքենավարութիւն անելով յերկու տարի անդադար: Այդ միջոցին խոշոր մասնակցութիւն է ունենում այնպիսի գծվարին գործերի մեջ, ինչպիսին «Աստվածաշունչ» և զանազան բառարաններ շարելն է:

1892—1894 թ. թ. Ղարախանյանը արդեն յերեք մեքենայի հսկիչ, գըրաշար և միաժամանակ փորագրիչ է Սերովիչենի տպարանում: Նրան են հանձնվում բուրղարերենի, թյուրքերենի, ֆրանսերենի շարվածքները, ինչպէս նաև ուսերենինը, վորը ճակատագրական յեղով Ղարախանյանի Պոլսում պաշտոնավարելու համար:

Ռուսերեն այլ գործերի հետ Ղարախանյանին հանձնարարվում է նաև Աթոնի վանքի պատվերների շարվածքը: Վանքի ներկայացուցիչ վրացի Միխայիլ Անդրեասովիչի միջոցով Ղարախանյանը ստանում է արտասահմանյան զանազան հեղափոխական հրատարա-


կուլթյուններ և ինքն ել անմասն չի մնում նաև տեղի հեղափոխական խմորումներին ու իր վրա յե դարձնում ժամանակի թյուրք լրտեսական բաժնի ուշադրությունը:

Հաջի Արմենակ անունով մեկը, վոր պալատական լրտեսի (մարեյին-հաֆիասի) դէրն ունեւր Պոլսում, առիթ է տալիս կառավարութեանը հալածանք հանելու Ղարախանյանի դեմ, և վերջինս 1894 թվի հուլիսին ստիպված է լինում փախչել Պոլսից և իր հայրենակից միքանի պարսիկների ուսանողակութեամբ հասնել Բաթում:

Նույն թվին թե Պոլսում վերահաստատվելու հուսով և թե գաղտնի կազմակերպութեան հատուկ առաքելութեամբ Ղարախանյանը կարճ ժամանակով նորից Պոլիս է անցնում, ապա կրկին վերադառնում Բաթում, ուր իր գոյութիւնը պահպանում է պատահական վատակներով:

1895 թվին Ղարախանյանն արդեն Թիֆլիսում, Հովհաննես Մարտիրոսյանի տպարանումն է: Քիչ համարելով ստացած վարձատրութիւնը, նա թողնում է տպարանը ավելի նպաստավոր պաշտոն ստանձնելու հուսով, սակայն բախտի չար խաղով ընկնում է իրրե մեքենավար տախտակագործի մոտ, ուր ավելի քիչ ուճիկով ստիպված է լինում աշխատել որական մինչև 18 ժամ:

Նույն թվի վերջերին Ղարախանյանն անցնում է Բագու, ուր իր վրա յե դարձնում վոստիկանութեան ուշադրութիւնն իրրե անբարեհույս տարր և հարկադրված է լինում այս անգամ ճանապարհ բռնել դեպի Յերևան:



Այստեղ դարձյալ պատահական վաստակներով իրեն ապրուստ և հայթայթում: Ի միջի աշխոյ պատրաստում և մի լուրմոտիով (փոքր), վորով գրավում և ողու գործարանատեր թ. Թադիանոսյանի ուշադրությունը և նրանից գործարանը կարգի գցելու հրավեր ստանում:

1896 թվի ապրիլի 20-ին Ղարախանյանը գալիս և Եջմիածին, և ճակատագիրը նրան առ միշտ կապում և Վաղարշապատին: Մ. Խրիմյանը, տեղեկանալով նրա տպարանական վարպետ լինելու մասին, առաջարկ և անում մնալու այստեղ, խոստանալով տպարանը կարգի գցելուց հետո տալ ամեն դյուրություն, Վարպետի ցանկությամբ ուղարկել Վիեննա, վորը նրան չի հաջողվում և վիշտ և պատճառում Վարպետին:

Եջմիածին գալուց ընդամենը միքանի որ անցած՝ նա նշանակվում և տպարանի վարպետ և մինչև այժմ անընդհատ շարունակում և իր գործը:

Պաշտոնավարության առաջին իսկ տարիներին նա գործոն դեր և կատարում տպարանի տեխնիկայի բարեգարգման և կանոնավորման գործում: Իր բազմակողմանի գիտելիքներն անխտիր ծառայեցնում և թե մասնավորապես իրեն հանձնարարած մեքենագիտական շրջանում և թե իր պաշտոնակիցներին ևս իր գործնական խորհուրդներով ու հրահանգներով ոգնության գալուն:

Նրա մշտական մասնակցությունով են գործի դրվել տպարանի համար նոր բերվող մեքենաները, նա յե իր խորհուրդներով գեղադարդել այդտեղ տպագրվող գրքերի տեխնիկան ընդհանրապես:

Դեռևս իննսունական թվականներին նա ձեմարանի, Եջմիածնի վանքի միքանի ջրհան մեքենաների

կատուցման մեջ ունեցել և խոշոր դեր խրքե աշխատող և աշխատանքների ղեկավար:

Այդ իսկ ժամանակից և մանավանդ դարուստ առաջին թվականներից Վարպետ Ղևոնդը հրավիրվում և եջմիածնի, Ղուրդուղուլու և Սուրմալուի շրջաններում կաղմակերպվող զանազան ձևերով թյուններում բամբակի, ջրհան և շատ ուրիշ մեքենաներ սարքելու և բանեցնելու:

Նա իրեն արած հանձնարարությունները շատ հաճախ կատարել և վոչ իրքե արհեստավոր, փորին գործը հետաքրքրում և շահի տեսակետից, այլ իրքե մեքենագիտություն մոլի սիրահար, փորի նվիրվածությունից շահում և շատ սկսվող մեքենագործական աշխատանքը:

1903 թվին Պետերբուրգի՝ տպագրական գործի տեխնիկական դպրոցից Ղևոնդ Ղարախանյանն ստանում և տպագրական գործի միջանի ճյուղի մասնագիտություն վկայական: Սա արդեն ապացույց և, վոր Վարպետ Ղևոնդը վարպետացել և վոչ թե մի վորեկ տպագրական գործի, այլ ընդհանրապես տպագրություն, ինչպես և կաղմարարություն:

1904 թվին Ղարախանյանը Մոսկվայից բերում և Պարսկաստան ուղարկելու համար մի փոքրիկ տպագրական մեքենա տանելով ու հարմարություններով, վոր հետագայում ուղարկվում և Վան:

1907 թվին սկսվում և եջմիածնի ելեկտրական կայարանի կառուցումը, փորի մեջ տեխնիկական բոլոր աշխատանքները կատարվում են Վարպետի մշտական աշխատանքով ու ղեկավարությունով:

Հետագայում, յերբ միտք և հղանում կայարանի

ուժից ոգտվելու և հորեր փորելու, վորոնցից ջրհան մեքենաներով ջուր հանելով հնարավոր և լինում, թեև կարճատև, վորոգելն ձեռնարանի մոտերքի հողամասերը, այդ ամեն աշխատանքները գլուխ բերվում են միշտ նույն Վարպետ Ղևոնդի տեսական և գործնական ղեկավարությունով:

1921 թվին Վարպետին հանձնարարվում և Յևրեանում ղեկավարել պետականացրած տպարանների միացման և նպատակահարմար կարգավորություն գործը: Նույն յեռանդով և արդյունավորություն գործն ի կատար և ածում նա նաև այստեղ, միևնույն ժամանակ կատարելով Պոլիգրաֆ-բամբակի վարչի ոգնականի պաշտոնը:

Այս բոլոր գործերի մեջ Ղևոնդ Ղարախանյանը յեղել և միշտ թե ղեկավար-կարգադրող և թե թեկերը սովորած, ձեթի ու մրի մեջ կորած բանվոր բառի իսկական իմաստով:

Յեվ միշտ նա այդ յուրոտ ու մրոտ արտաքինի տակ, չը նայած ապրած կյանքի հաջող ու անհաջող յեղեկներին, պահել և մի մաքուր սիրտ, աշխատանքի ու ստեղծագործություն մի անմեղ յեռանդ, նույն աշխատանքից իրեն բաժին յեղած վաստակը միշտ մերձավորի հետ վայելելու մի անդուստլ ծառայ ու առհասարակ բացառիկ համայնակցայի վճիռ հողի:

Վարպետը այժմ բազմանդամ ընտանիքի հայր և: Պարտաճանաչություն և մերձավորին ոգտակար լինելու իր մշտական պատրաստակամություն համար իր կյանքում ունեցել և յերկու վարձատրություն:

Նախ՝ անշնորհակալ մեքենաներից ստացած մանր ու մեծ վերքերի սպիները,

և յերկրորդ՝ իրեն ճանաչողների անկեղծ հարգանքն ու սերը:

Բայց մի չի ճանաչում Վարպետ Ղևոնդին, սպիտակեղևի նկարված ու բոլորից անխտիր սիրված ու հարգված Վարպետ Ղևոնդին:

Չնայած վարպետ Ղևոնդի վարած չարքաշ կյանքին, այժմ ել անսպառ տոկունությամբ նա մասնակցում է մեր յերկրի շինարարական աշխատանքներին:

Նրան կը տեսնեք մեկ տպարանում, մեկ ելեկտրակայանում, մեկ Վաղարշապատի փողոցներում ելեկտրասյուներ կամ ելեկտրալարեր անցկացնելիս, մեկ ջրաղացներում վորեն փչացած մաս ուղղելիս, և այսպես անվերջ:

Վարպետ Ղևոնդը յեթե ուրիշ գործարանային քաղաքում ապրեր, վատահորեն կարող ենք ասել, վոր տպագրական և մեքենագիտական գործի մեջ գյուտեր կաներ:

Վարպետը բազմաշնորհ է:

Մեզ մնում է միայն մեր հարգանքի խոսքն ասել նրան և մեր տաք վերաբերմունքով մի պահ թեթևացնել նրա կրած տանջանքները, վոր այսուհետև ավելի յեռանդով մասնակցի լինի մեր ստեղծարար ու շինարար աշխատանքներին:

Հարգանք 35 տարվա աշխատանքի հերոսին:

Հորեկնական Հանձնաժողով:



9876

Թ. Ն. Կ.

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0082844

